+1000 փեթակ Հայաստանի համայնքներին

ՄԱԶԾ «Կայուն համայնքներ» ծրագրերը կրկին մեկնարկում են

«HONEY-MONEY» նախագիծն այս անգամ Գեղարքունիքի մարզի՝ Սոթք, Կութ, Ազատ և Նորաբակ բնակավայրերում մեկնարկում է «HONEY-MONEY» նախագիծը, որին կարող են մասնակցել վերընշված բնակավայրերի 18-50 տարեկան կանայք:

Նախագծի շրջանակներում կիրականացվի երկօրյա վերապատրաստման դասընթացներ, որի ավարտից հետո մասնակիցները կհանձնեն քննություն, և առավել բարձր միավոր հավաքած մասնակիցները կընտրվեն հաջորդ փուլ, որտեղ կիրականացվի կարիքների գնահատում, և համապատասխանելուց հետո սահմանված ժամանակացույցով կտրամադրվեն ժամանակակից դադան տեսակի պոլիուրեթանային փեթակներ:
Ծրագրին կարող են մասնակցել նաև 18-50 տարեկան Honey-Money նախագծի նախկին շահառու կանայք:
Մեղվափեթակները կտրամադրվեն հավասարապես, յուրաքանչյուրին՝ 2 մեղվափեթակ:
Դասընթացը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 25-26-ը, Վարդենիս համայնքի համայնքապետարանի դահլիճում, ժամը՝ 11:00-ին:

Դասընթացներին մասնակցել կարող եք զանգահարելով 041 24 00 18 հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:

Եթե չեք հասցրել նախապես գրանցվել, ապա կարող եք գրանցվել դասընթացի օրը, ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:

Հիշեցնենք, որ «HONEY-MONEY» նախագիծը միտված է համայնքներում գործող տնտեսությունների աջակցությանը և աղքատության նվազեցմանը տնտեսական ակտիվության խթանման միջոցով: